ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՂՈՒՐԱՑԻՑ մեզ հաղորդում են, թէ տեղային հոգեոր ղպրոցի գոյութիւնը պահպանելու համար հանգանակութիւնս հաւաքված 2755 բուրլ յանձված էր հոգաբարձու պ. Ս. Ս.-ին չանցնելու համար։ Ցիշեալ գումարի տոկոսը միացնելով եկեղեցապատկան փողերի տոկոսի հետ, պիտի մասնակցարկին ղպրոցի գոյութիւնը պահպանելու ծախսերը։ Բայց եկեղեցապատկան փողերը երեսփոխանի ձեռքին օգնության և ղպրոցը զրկվեցաւ արդիւնքի այդ աղբիւրից։ Իսկ ինչ որ վերաբերում է վերոյիշեալ 2755 բուրլուն, որ գտնվում է պ. Ս. Ս.-ի ձեռքում, նա այդ գումարը իր սեփականութիւն համարելով, ամենեին կամք չունի ձեռքից դուս թողնել, չը նայելով, որ ուրիշ աւելի հաւատարիմ անձինք ցանկանում են այդ գումարը իրանց մօտ պահել աւելի չհաւէլու և հատատ գրաւականով։ Նամակագիրը աւելացնում է, որ քանիցս անգամ հոգաբարձու պ. Ս. Ս-ի մասին բողոք է մատուցվել հոգեոր իշխանութեան և միշտ մնացել է անպատասխան։

—

Մեզ հաղորդում են ՔԱՐՎԱՆՍԱՐԱ գիւղից, որ հացի թանգութիւնը բոլորովին անտանելի է դարձել, չքաւորներից շատերը բացի բանջարեղէնից ուրիշ բան չեն գտնում ուտելու։ Իսկ հարուստ լարիները աչքառում են իսկ ազքատների վերջին կոպէկները, նրանց վրա հաց կրկնապատիկ գնով վաճառելով։

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱ գիւղից մեզ գրում են, որ երեխաների մէջ տարածվել է դիֆտերիտ հիւանդութիւնը, բայց աւելի գոհար չէ տանում։ Անասունների մէջ նոյնպէս հիւանդութիւն կայ և սաստիկ կոտորվում են, այս պատճառով անասունների արժէքը անհամեմատ իջել է. գիւղացիները զրկվում և այդ հարստութիւնից ընկնում են ցաւալի չքաւորութեան մէջ։

—

Մեզ գրում են ՁԱՂԱԼ-ՕՂԼՈՒ, որ տեղային երկաթ ղպրոցի ուսուցիչները մտադիր են Զատիկ յետոյ մի ներկայացումն տալ յօգուտ վանի սովատանջների։ Բացի դրանից յօգուտ նոյն սովատանջների հաւաքվել է 50 բուրլ. նուիրատուութիւնները դեռ չարունակվում են։

—

Մեզ հաղորդում են, որ ՂԱՁԱԽի գաւառում երկաթաև ձմեռը, ձիւնի չաւութիւնը և սաստիկ ցրտերը մեծամեծ վնասներ պատճառեցին։ Որմէնեան դաշտերը ձիւնով ծածկված լինելով, երկրագործ ժողովուրդը զրկվեցաւ գարնանային ցանքից, և ձմեռը երկարաև լինելով, անասունների պաշարը սպառվեցաւ, ոչխարները, խոզերը և այլ չորքոտանիները ձիւնապատ դաշտերի վրա ճարակ չը գտնելով, մեծ մասամբ կոտորվեցան։

—

ՆՈՒԽԻՈՒՑ մեզ հաղորդում են, թէ այն անձինքը, որոնք նշանակված են կառավարութիւնից ալված ցորեանը աղքատներին բաժանելու, խիստ անդրդութեամբ են վարվում իրանց յանձն առած պարտաւորութիւնների մէջ։ Նրանք ուշադրութիւն չեն դարձնում այն չքաւորների վրա, որոնք չուտափոյթ օգնութեան կարօտ են և բաժանում են իրանց ձեռքի ցորեանը որպէս և պատահում է։ Կարմրուկ հիւանդութիւնը տարածվել է երեխաների մէջ և չատ զոհեր է տանում։ Ուսուցիչ պ. Մ. սկսել է հանգանակութիւն անել յօգուտ վանի սովատանջների։

—

Մեզ գրում են ՔԱՐՎԱՆՍԱՐԱ գիւղից, որ Ղ. Ս. քահանան, իր կոչման անվայելուչ վարմունքով ժողովրդի մէջ զանազան երկպառակութիւնների պատճառ է տալիս, խանգարում է ղպրոցի բարեկարգութիւնը, հալածում է ուսուցիչներին և մինչև անգամ իր քահանայական պարտաւորութիւնների մէջ զանցառութիւններ է անում։ Այս բոլորից յետոյ տէր-հայրը մի քանի միամիտներին խելքից հանելով, վիճակում է ստացել և առաջարկել հոգեոր իշխանութեանը, որ իրան արժանացնեն կամիտիտիպի և ուսուցչապետութեան։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ ստոր դասի ժողովրդի մէջ տարածվել է մի ծիծաղելի լուր, որից սաստիկ յուզված է ռամիկների մեծամասնութիւնը։ Պատմում են, իբր թէ մի երէց յայտնվել է հարուստ Միրզոյեվի հոգիներից մէկին և պահանջել է նրանից մի գառը։ Հոգիը վախենալով կատարել է երէցի պահանջը։ Մի օրից յետոյ հոգիը տեսնում է, որ նոյն գառը վերադառնում է հօտի մէջ, վզից կախված ունենալով մի թղթի կտոր։ Նրա վրա գրված են լինում հետեւեալ խոսքերը, թէ չուտով մահ տարածամ, ժամանակ և ջրհեղեղ պէտք է լինի, և պէտք է ասում են, որ Թիֆլիսի քահանաներից մի քանիսը եկեղեցիներում քարոզում են ժողովուրդին, որ աղաչեն իրանց մեղքերը, խոստովանվեն և հաղորդվեն, որպէս զի Աստուծոյ այդ բարկութիւնը անցնի։ Մեր տեղեկությունները չատ սխալվում են, թէ այսպիսի մտքերով կարելի է ժողովրդին դրաւել դէպի եկեղեցին։

—

ԲԱԴՈՒՈՒՑ մեզ հաղորդում են, որ այս քաղաքում կառուցված է մի գեղեցիկ չորեքարձ աղօրիք (мельница) որ պատկանում է Բէկեմասն և ընկ. Երբ առաջին անգամ աղօրիքը սկսեց գործել, ընկերութիւնը յանձն առաւ ձրիապէս աղալ 2000 պուդ ցորեան, որ պատկանում էր քաղաքի աղքատներին։

—

Մեզ գրում են ԲԱԴՈՒՈՒՑ, չը նայելով որ տեղային հացթուխների մօտ մեծ քանակութեամբ ալիւր է ամբարված, դարձեալ նրանք հացի ֆունտը ծախում էին 6 կոպէկով։ Բայց երբ պոլիցիան հրամայեց, որ ֆունտը 4 կոպէկից աւելի իրաւունք չունենան ծախելու, նրանք թագցրին իրանց բոլոր ալիւրները, յայտնելով, թէ վաճառելու հաց չունեն։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ հացի թանգութիւնը տակաւին ժողովրդի ազքատ դասի համար անտանելի է։ Քաղաքում 170 տուն, բաղկացած 800 հոգուց, այն աստիճան չքաւորութեան մէջ են, որ ապրում են ողորմութիւնով։ Քաղաքի հարուստներից ոմանք, մանաւանդ մեծ. Մ. Խունդադեանցը մեծ աչքաւորութիւն գործ դրեցին, թէ նպաստներ հաւաքելով, թէ ընկերութիւններ կազմելով և թէ իրանց քսակից ծախսելով, որպէս զի աղքատների վիճակի դառնությունը դիւրացնեն։ Այս բարիգործութիւնների մէջ անտարբեր մնացին միայն քահանաները, որոնք սովորած են դժուարին բոլշեներում չքաւորներից իրանց միշտ հեռու պահել և մտանել ժողովրդին այն ժամանակ, երբ նրա քսակում մի քանի կոպէկ փող կը տեսնեն։

—

Մեզ հաղորդում են ՇԱՄԱԽՈՒՑ, որ տեղային հայ-աւետարանականները, որոնք առաջ միշտ իրանց հեռու էին պահում ազգային հանդէսներից, այժմ սկսել են մասնակցել։ Օրինակ այս քաղաքում «Լարգանս» ողորդութիւնը ներկայացնելու ժամանակ հանդիսականների թւում կային չատ աւետարանական-հայեր, որ մինչև այժմ չը տեսնված բան էր։

—

ԵՐԵՒԱՆԻ պ. քաղաքապետ Ց. Ղորղանեանցը մեզ հաղորդում է, որ պ. Պոզոս Մէլիք-Բէկլարեանցից յօգուտ Երեւանի աղքատների նուիրված 30 բուրլի բաժանել է զանազան չքաւոր ընտանիքների, որոնք հացի սաստիկ կարօտութիւն ունէին։

—

Մեզ հաղորդում են ՆՈՒԽԻՈՒՑ, որ փետրվարի 28-ին կատարվեցաւ Վարդանոյ Նահատակների միջտարեկ։ Հոգեոր ղպրոցի ուսուցիչներից մէկը, պ. Մ. Ա. ոտքի խորհրդին պատշաճաւոր մի ճառ կարդաց։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են, որ Նոր-Արշալոյս ուսումնարանի աշակերտութիւնների մէկը՝ Եղ. Ձ-վարեանն անունով փողոցում հանդիպում է նոյն ղպրոցի ուսուցիչ Գէորգ քահանայ Միսակեանին։ Վերջինը հարցնում է օրիորդից, թէ ինչու մի ամբողջ չարաթ ղպրոց չէ գալիս։ Օրիորդը երկիւղով պատասխանում է. «Ես սխալնում եմ, որ ինձ էլ նշխոյանի պէս ծեծեաս» Տէր-հայրը մի սաստիկ աքացի տալով խեղճ օրիորդի մէջքին, ցած է գլորում, ասելով. «Քշուտ-ական, դու չես իմանում, որ ես էլ աղջիկներին չեմ ծեծում»։ Մի քանի մարդիկ վրա են հասնում և ուշաթափ աղջկան տանում են տունն Տէր-հօր մանկավարական նոր մեթոդի մասին մի քանի ուրիշ աւելի խայտառակ փաստեր էին հաղորդված, բայց աւելորդ համարեցինք տպագրել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ԲԱՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Գերմանական «Allgemeine Zeitung» լրագրին Պերսլից գրում են հետեւեալը Հայաստանի մէջ եղած սովի մասին։

«Թիւրքիայի ասիական նահանգներում կատարեալ ապստամբութիւն է տիրում, մինչ այն աստիճան, որքան դժ ուն սովից թուլացած ժողովուրդը։ Ամբողջ Սիրիայի, Բաղդատի և Հէջասի մէջ կատարեալ չփոթ է տիրում։ Բոլոր քաղաքներում կռիւներ, մարդասպանութիւններ և աւազակութիւններ են պատահում փոքր դրամների զործածութիւնից վերցնելու պատճառով։ Փարիզ-Ասիայի քրիստոնեայ բնակիչները թողնում են իրանց բնակարանները և գնում են մեծ ճանապարհների վրա լեշերով կերակրվելու համար։ Դամասկից հաղորդում են, որ Միհեհաղ-փաշա սպանված է Կ. Պոլսից ստացված ուղղակի հրամանի պատճառով։ Այդտեղ վախնում էին, որ Միհեհաղ-փաշա օգուտ կը քաղէր ներկայ հանգամանքներից և կը ձայնեցնէր Սալդիզիիեօշի պալատը։ Հայ մամուլը այնպէս լցված է Հայաստանի մէջ մինչ Ղզիզը տիրապետող սովի մասին տեղեկութիւններով, որ նրանցից անկարելի է քաղուածքներ անել։ Անհրաժեշտ է մատնացոյց լինել երկու հանգամանքների վրա։ Դուռը երեք շաբաթ առաջ նահանգները հրաման ուղարկեց ժողովրդի համար հացի պետական պահեստները բաց անելու մասին։ Այդ հրամանը դեռ ևս ոչ մի տեղ չէ կատարված։ Միւս կողմից Բ. Դրան կարգադրութեան համեմատ այստեղի և նահանգների հաց բաժանող մասնաժողովների մէջ հեռագրական յարաբերութիւնները ընդհատված են։ Նահանգներից այստեղ առան, արգելքի հանում են հեռագիրներ, մինչդեռ այստեղից ուղարկված հեռագիրները նահանգական մասնաժողովները չեն ստանում։ Պատրիարքարանի մէջ Վանից մի հեռագիր է ըստացված, որ հաղորդում է, թէ Աղզակի նահանգում սովից մօտ 100 մարդ է մեռել։ Իսկ մի մօտ ամբողջ գիւղի բնակիչները ոչնչացան։ Հալեպից ստացված նամակը տեղեկացնում է, որ ցորենի չափի գինը 50 պատարից 250-ի է հասել, որ հացի պահեստների տէրերը բացառապէս մեջլիսի անդամներ են և որ նոքա մինչև այժմ չեն կամենում բաց անել իրանց պահեստները։ Հայթուխների կողոպտելը մի կողմից, բեդուինների և բիւրդերի մոնտելը միւս կողմից չը կարողացան այդ հաց ծախող աւազակների յամառութեանը յաղթել։ Բեդուինները գրկվեցան իրանց անասուններից։ Անեղէ ցեղը, որ Սիրիայի անապատի մէջ ամենաշատաւոր է և 30,000 վրաններից է բաղկացած, պատուիրել է յայտնել Դէ-յիրէի նահանգապետին, որ այդ ցեղը հաց չունի, որ նրանց ոչխարները, ուղտերը և ձիերը, թուով մի քանի հազար, կերակուրից զուրկ են և այդ պատճառով նա պէտք է թողնի անապատը։ Ամենը Հալեպի շրջականերում մանաւանդ կորստարեր էր ներքինների համար։ Մի գիւղի մէջ 120 բնակիչներից միայն 40 հոգի մնացին, իսկ միւսի մէջ 280-ից միայն 70։

ԱՄԵՐԻԿԱ

—

Նիւ-Եորկից «Ռուսսկ» լրագրին գրում են հետեւեալը։

«Որերորդ ևս հաղորդեցի, որ Միացեալ-Նահանգների նախագահ Հէյզ յետ կանչեց Պեկինի ամերիկական դեսպան Սիւարդին։ Ընկղմից այդ կարգադրութեանը քաղաքական մեծ նշանակութիւն էին տալիս, ենթադրելով, որ ամերիկական կառավարութիւնը մտադիր է Չինաստանի հետ ունեցած դիպլոմատական յարաբերութիւնները դադարեցնել։ Այդ ենթադրութիւնը սխալ էր։ Այժմ յայտնի է Սիւարդի յետ կանչելու իսկական պատճառը։

«Պ. Սիւարդ առաջ քան թէ Պեկինի ամերիկական դեսպան նշանակվելը, երկար տարիների ընթացքում Ճանխայի մէջ ամերիկական հիւպատոսի պաշտօն էր կատարում և բաւական օգնեց ամերիկական առևտրի ծաղկելուն Չինաստանի մէջ։ Այդ ծառայութիւնները ի նկատի ունենալով, ամերիկական կառավարութիւնը նրան իր դեսպան նշանակեց Պեկինի մէջ։ Դեռ հիւպատոս եղած ժամանակ, պ. Սիւարդ աշխատում էր պաշտպանել իր հայրենիքի շահերը և տարաբաղդաբար չէր հաշվում Ճանխայի ոչ առևտրականների և ոչ իշխանութեան հետ։ Այդպիսով անբաւականութիւններ ծագեցան, որոնց վրա ուշադրութիւն դարձրին թէ Ճանխայի և թէ նահանգների բռնանգիր իշխանութիւնները։ Սիւարդին մեղադրում էին կաշառակերութեան մէջ, իբր թէ նա ձգտում էր վնասել չինական առևտրին, բայց չը նայելով այս մեղադրանքներին, անխրելի եռանդ բան հաստատել և փաստերով ապացուցանել Ցարպիկ ամերիկացու յանցանքը, որովհետև նա կարողացել էր ամեն բան ծածկել։ Պ. Սիւարդ նկատելով, որ իր դրութիւնը Ճանխայի մէջ հետզհետէ վատանում էր, խնդրեց ամերիկական կառավարութենից իրան տեղափոխել։ Նրա խնդիրքը շուտով կատարվեցաւ։ Ամերիկական կառավարութիւնը, չը կամենալով զրկվել իր եռանդուն և զործունեայ զործակատարից, նրան Պեկինի մէջ իր ներկայացուցիչ նշանակեց։ Պ. Սիւարդ այդ նոր ասպարիզի վրա չարունակից իր նախկին քաղաքականութիւնը և իր իշխանութեան տակ ունենալով Չինաստանի ամերիկական հիւպատոսներին, չտրաքանց շփոթեցրեց թէ չինացիներին և թէ նրանց կառավարութեանը։

«Մի քանի տարի գործը այդպէս չարունակվում էր։ Երբ սկսվեց Զանխայուի գործը, պ. Սիւարդ օտար պետութիւնների ներկայացուցիչներից առաջինն էր, որ բացարձակ պաշտպանեց Ս. Պետերբուրգի Նախկին դեսպանին և Կուլջայի գաշնագրի ողորմելի հեղինակին։ Չինական անհոգ կառավարութիւնը որ վաղուց մոռացել էր պ. Սիւարդի յանցանքները, այժմ ուշադրութիւն դարձրեց յանդուգն ամերիկացու վրա, որ համարձակվեցաւ խառնվել չինական արտաքին գործերի մինիստրութեան կարգադրութիւնների մէջ։ Հին հաշիւները և մեղադրանքները նորից սկսվեցան։ Չինական կառավարութիւնը սկսեց զանգատվել Վաշինգտոնի կառավարութեանը պ. Սիւարդի վրա, որ համարձակվեցաւ խառնվել չինական կառավարութեան գործերի մէջ և պաշտպանել չինական դեսպանին։ Ամերիկական կառավարութիւնը ստիպվեցաւ յետ կանչել իր զործունեայ ներկայացուցչին և նրա տեղ մի ուրիշին նշանակել։ Եթէ Վաշինգտոնի մինիստրութիւնը այդպէս չը վարվէր, չինացիները մտադիր էին կորել իրանց դիպլոմատական յարաբերութիւնները Ամերիկայի հետ։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼՈՆԴՈՆ, 1428 ապրիլ։ Նշանակված են միջխարներ։ Գրնվիլ արտաքին գործերի, Հարթինգտոն Հնդկաստանի գործերի, Ջայդերը զինուորական, Նորբրուկ ծովային, Սելբորն յոթ կանցլեր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 ապրիլ։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ր. 50 կ., երկրորդ 219 ր. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 7 ր. 81 կ։ Ռուսաց 1 բուրլ Լոնդոնի վրա արժէ 25,21 պէնս, ռուսաց 100 բուրլ Համբուրգի վրա արժէ 214 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 265 ֆր.։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ։